Չորրորդ Տարի

# ԽԱԹԱԲԱԼԱ

Գինն է 10 կ. Գաւառներում 12 կ. 1909, Շաբաթ, Սեպտեմբերի 5-ին. Թիֆլիս. №36.

## ՀԱՅ ԱՐԴԻ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ



Худож.-Лит. С. Быхова, Тифлисъ. Կոստանդեան [illegible]

ՄԵՐ ԳՈՐԾԵՐԸ ԵՒ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ ԱՅՍՊԷՍ ՆՆՋՈՒՄ ԵՆ




Դաղստանի իմամ
ՇԱՄԻԼ

Կովկասի հերոս
Յովհաննէս Դաւթեան ԼԱԶԱՐԵԱՆ

Արեւելեան Կովկասի գրաւման յիսնամեակի յիշատակին

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

1909 թ.

Տարի 4 „ԽԱԹԱԲԱԼԱ“ 4 Տարի

Երգիծաբանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթի

ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ԱՄԵՆ ՇԱԲԱԹ ԱՆԽԱՓԱՆ

Պաշտօնական օրգան բոլոր հայ և օտարազգի գործիչների, որոնք արժանի են ծաղրանկարւելու, քննադատւելու, ծաղրի և ծիծաղի։

«Խաթաբալայի» բաժանորդները, այլև երդւեալ ընթերցողները

ԱՊԱՀՈՎԱԳՐՒԱԾ ԵՆ

ամեն տեսակ պատուհասներից և խայտառակութիւններից

Խմբագրութիւնը բաց է՝ երբ փակ չէ, և գտնւում է Մօսկովսկայեա փ. № 19

Յայտարարութիւններ ամեն լեզուներով և խիստ մատչելի գներով։

Մահազդեցակները ձրիաբար։

Մեր ընթերցողներին մահ ենք ածում սխալական տէրօպլաններով։

Բազմաչխատ գործակալներին և «Խաթաբալայի» պրօպագանդիստ տարածողներին «Խաթաբալան» ուղարկում ենք ձրի։

Խմբագրին կարող է տեսնել ով որ աչք ունի և քոռ չէ՝ ամեն քնած ժամանակ, խմբագրատանը անժամանակ և փողոցներում բոլոր ժամանակ։ Առանձին ընդունելութիւններ չի ունենում. իսկ գաղտնի խորհ ունեցողներից խուսափ փախչում է։ Նիւթեր, յօդուածներ, ոտանաւորներ, յայտարարութիւններ և այլն մենք էլ ենք ընդունում փոստն էլ, միայն ճանապարհածախսը ձերն է. առանց մարկայի նամակներ „սկզբունքով“ չենք ընդունում։ Յօդուածների համար վճարում ենք, եթէ արժան ենք համարում. իսկ անարժանների համար փող էլ որ տան, չենք տպիլ։



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է

| | | | |
|---|---|---|---|
| Տարեկան Թիֆլիզում | 4 ր. | դուրսը | 5 ր. |
| Կէս տարւանը . . . . | 2 ր. | . . . | 3 ր. |
| Երեք ամսւանը . . . | 1 ր. 50 կ. | | |
| Ամիսը . . . . . . . . . . | 50 կ. | | |

Մեր հասցէն՝ Тифлисъ, Редакція „Хатабала“։

Արտասահմանից՝ Tiflis (Caucase) Re'daction „Khathabala“.

Խմբ. հրատարակող՝ ԱՍՏ. ՆՐԻՑԵԱՆ

Սեփական հեռաթել № 00

„ „ „ „ Հեռախօս № 000

## Սեպտեմբերի 1-ից մինչև տարւայ վերջը ,,Խաթաբալան արժէ 2 ռուբլի։

Դաւառական քաղաքներում, աւաններում և ընթերցասէր գիւղերում, հարկաւոր են լրագրավաճառ գործակալներ, որոնք յանձն առնեն «ԽԱԹԱԲԱԼԱՆ» տարածել, իրենց շրջաններում»։

Պայմանների մասին դիմել Թիֆլիզ, խմբագրութիւն «Խաթաբալայի»։

## ՄԻՐ ԴՈԽՏՈՒՐՆԻՐԸ

Վուր մէ գամ էլ ասիմ թէ աշխարքըս փալշիւ է, ով գիդի դու ք հենց գիդենաք, թէ էնենց՝ հանաք իմ անում. ձիգմէն շատիրն էլ ով գիդի էն ասին, թէ էտ բանը իս՝ էլի իմ ասի։

Ղուրթ է, ասիլ իմ ու էլի կօսիմ, վուր աշխարքս փալշիւ է։

Իսկի ձիր տանը դուք հիւանդացած կա՞ք, կուլիք բա՞ս, հէր օխնածնիր, զանայ հիմիկուա մարթը կուլի՞ վուր տարենը մէ տաս քամն ջէր չհիւընդանայ, վուր մարթս հիւանդ էլ չլի, հիմիկւայ դոխտուրնիրեմէն կու հիւընդանայ. բաս ինչ կուլի։

Խօլերէն անհած, ան կերած կա՞ք։

Հիմի ով գիդի դուք արմիաք, թէ վո՞ւնց թէ անհած, ան կերած։

Իս ձիզ արգա կօնիմ, գիտա, անհած ու կերած. չունքի զակօնով— դոխտուրնիրու խուսակով, մինչկի մարթըս խօլերի ճուտիր չը կուլ տայ. կօսէ, չի հիւնդանայ, կօսէ, ու հալբաթտա թէ վուր կուլ տայ, կու մեռնի էլ։

Ո՞վ գիդի, աշխարքի վրէն ինչիր չէ ըլում հա։

Ու էտու համա էլ՝ վուր խօլերով մարթս չըհիւընդանայ, դոխտուրնիրը մինչկի հիմի հրամանք էին անում.—

—Հում ջուր չըխմիք, կօսէ, միրք միք ուտի, կօսէ. չըհարփիք. կօսէ, ցեխուտ տեղիր չմնգաք ու չապրիք, կօսէ, չունքի. էտ տիղերում, էտ հում ջրի, էտ խարա-խուրէքի, մրքի մէջ խօլերի ճուտիրը ապրում ին, կօսէ, ու հէնց վուր մարթս կուլէ տալի էտ պուճուր խօլերէքը, կօսէ, էն սահաթին մարթուս փորի մէջ, մէկը հազար ջէր աւելնում է, կօսէ, սիմինդի բատիրուտի պէս կօսէ. ու թէ վուր մարթս գլխի չը ներնգաւ, կօսէ, կուլի ըլի, վուր էտ խօլերէքը մէ օրումը մինչկի մէ էրկու իրեք միլիօն դաշունի թաւուր շատանան, կօսէ. էտու համա էլ, հրամանք էին անում, վուր էփած ջուր, կօնիակ, ժանախոր, սպիրտ Ռափայէլ ու էս թաւուր դանդրումարնիր խմինք, չունքի խօլերէն, միր բարիշնենքոց թաւուր խասիաթ ունէ, կօսէ. արաղի, սպիրտի, ժանախորի ու կօնիակի հուտիցը խիստ զզւում է, կօսէ։

Հախ Աստու, մինչկի հիմի՛ խալխըն էլ էտենց էր անում։

Աշունքը վուր գալիս էր, խօլերէն էլ հիդն էր ըլում ու վա՜յ միր բաղատէրիրի, միր բաղանիրի օրին, խեղճերի հոքին՝ անխօլերա էլ դուս էր գալի, չունքի հրամանք էր ըլում՝ վուր միրք քիչ ուտինք, դրա մագիէր Սարաջովն ու Շուստովը, Սողոմոնովն ու Մեղվինովը խալխի աչկը հանում էին, ամէնքին խմիչք էին շանց տալի ու ասում՝ բա՞ս, ձիր հոքին միր ձեռումն է, կօսէ, թէ կու խմիք էս դանդրումարներից, կու ազատւիք խօլերեմէն, թէ չիք խմի ու մա՜շ՝ պր-ոշչա՜յ Թիֆլիզ, կօսէ։

Խալխն էլ խօ էն չախւանից ախմախ է, հայ գրողներու հանգի. է, թէկի ասում էին, հրամանք ին անում ու էն էլ ո՞վ, դոխտուրնիրը. ինչ խուսակ վուր կու խմէին ու վիրչը էն

տեհանը, վո՛ր միզ մօդ հարփաննիր ուփր. շատ կէին ու կան, քանց թէ էտ կուլէր պխանիցներու աշխրքում։

Հիմի Պետրերուխեմէն մէ նամակ ստացայ, իմ մէ բարեգամ մինձ մարթուց. նա էնդի խիստ մինձ տօնյուղի մէչ է, վունց ցանում է, վունց հրնձում ու ճնճղուկի թաւուր ապրում է, վունց վուր միր վարթապխանիրը. ամեն օր պալատնէրու աղաքով անց է կենում, Նեցկի վրէն էլ ըլում է, կիրագի օրիրն էլ հաուց ժամ է գնում։

Էս բարեգամս, ինձ, բարովագրի հիդ մէ էրկու գազէթ էլ ղրգիլ է ու ապսպրիլ է.—

—Գասպար ջան, օրէսի դէնը խոլերի ձէն վուր իմանաս, կօսէ, էլ էն թաւուր դեղիր չխմիս, կօսէ. հիմի ուրիշ թաւուր դեղիր է, կօսէ. վիկալ էս գազէթնիրը կարթա ու կու տեհնիս, կօսէ։

Ես էլ ախմախացայ, վիկալայ ու կարթացի. ա՛յ թէ ինչ էր գրած, վուր վիրչն էլ «Տրիֆլիցկի Լիստօկում» փեչատեցին.

«Զագրանիցեմէն էկաւ մէ մինծ պրոֆեսուր դօխտուր, իրիք չուրս ամիս առաջ Պետրբուրխի խոլերանոցում ու ինչ վուր փիս ու մուրտառ ջուր էր, էն էր խմում ու էն էլ, հում հում, կօսէ. մըքիէն փթած, խակ ու մակը հեստի էր ուտում, վունց վուր խոզը, կօսէ. ցեխոտ քուչեքով էլ ման էր գալի ու տաք տաք բանիր, թունդ թունդ խմիչքնիր չէր խըմում, կօսէ, գրաշարնիրու ու զա օղչիկնիրու ջգրու, կօսէ, ու խոլերին՝ խոլերով սպանում էր, կօսէ»։

Վիրչը, էս պրօֆեսուր դօխտուրը էնդի, ունիվերսիտետի շկօլումը, դօխտուրներու մօդ հրամանք է անում.

«Թէ զուզիք խոլերին սպանի ու հոքին հանի, կօսէ, մաշ խմեցէք հումած, սառը ու հում ջուր, կօսէ. ու կօնիակ, Ռուպֆալէլ, սպիրտ, արաղ, մանախորներիցը հեռու փախէք. կօսէ»։

Հիմի իմացա՞ք. տօ, դուք միք սաղ, էս դօխտուրնիրը մինչև հիմի էն էին սաում, ինչ վուր չպիտի ըլէր։

Վա՛յ մէ, վա՛յ մէ։

Միր վուր գուրձի մէչ էտենց չէ։ Դուք, թէ ձիր գլխուած հոքին կու սիրիք, թէկի դօխտուրի մօդ էլիլ իք, էտենց բանիր քիչ է սաղ։

Մէ լաւ ճանանչ դօխտուր, մէ զամ իմ մէ լաւ ճանանչին դեղիր էր տալի խեղիմ ժուգ, էս ճանանչս սրա մօդ ամեն օր գնում գալիս էր. խեղճն էլ օր ապրում էր, օր մեռնում. դօխտուրն էլ մէ գլուխ էն էր սաում թէ.

«Էս պիտիս խմի, էն պիտիս ուտի, էս պիտիս անի ու էն պիտիս չինի կօսէ»։

Հրամանքնիրն էլ կատարում էր. տօ մէ Աստուծոր, էս հիւանդ ճանանչը՛ս խիստ նեղացաւ. կանչեցին ուրիշ դօխտուրի, վիկալաւ անդղից ու վիրչը սաից թէ.

«Վունչինչ, կօսէ, էստի ուրիշ թաւուր դեղիր է հարգաւուր, կօսէ, էն դեղիրը վուր խմիլ իս ու խմում իս, կօսէ, քու հիւանդութենին խիստ զարար է, կօսէ. հիմի էս թաւուր թազա դիղ է լուս նըրնգի, թազա դեղիր պիտիս խմի, կօսէ, ու էնչախնեւէթ կու լաւնաս, կօսէ»։

Էտ թազա դեղիրն էլ խմից հիւանդը, համա վունց էս աշխրքի կուռը էրեւը չուռ տուից, վունց էն աշխրքի կուռը։

Էլի դօխտուրը էկաւ ու ուրախ ուրախ պատմից.

«Վուր թազա ժուռնալնիրում կարթացիլ է, թէ էս հիւանդութինը էն դիղերով չըպիտի դարմանել, ինչ վուր տալիս էր, չունքի էտ դեղիրը, կօսէ, խիստ զարար է մարթուս, կօսէ, ու հարգաւուր է նուր դիղը, կօսէ»։

Գրից էտ նուր դիղն էլ ու գնաց, հիւանդն էլ էլի էնենց էր, վունց էս կուռը, վունց էն կուռը։

Էլի էկաւ դօխտուրը, էլի գնաց, էլի էկաւ, էլի գնաց... էլի էկա , էլի գնաց, էլի էկաւ, էլի գնաց, էլի էկաւ, էլի գնաց, էլի էկաւ, էլի գնաց, ու մի զամ էլ իփ վուր էկաւ, ուրախ-ուրախ վրայ տուից.

«Հիմի էտ դիղն էլ լաւ չէ, կօսէ, էտու համա զագրանիցում փլան դոխտուրը ասում է։ կօսէ, «վուրէն դիղիրը, ինչ վուր տալիս էինք, կօսէ, խիստ փաթերակաւուր է, կօսէ, դրա համա հարգաւուր է ուրիշ դիղ, կօսէ»։

Դրից դիղը, բերինք ու տուինք։

Նաչար հիւանդը ձիզ իրա կինքը բախշից, էկաւ դօխտուրը, վիկալաւ նուրմէկանց անդղից մեռլին ու մէքաշ գլուխը ձեռնիրով բռնից՝

«Մեռիլ է. կօսէ, խիղճը. ափսո՜ս, ափսո՜ս մարթ, կօսէ, հիւանդութինն էլ ի՞նչ հիշտ բան է էլի, կօսէ. ափսուս վուր չէի գիդի, կօսէ, թէ չէ մէ սահաթայ բան էր դրա լաւցնիլը, կօսէ։

Մնացի բերանս բաց. Տէր իմ Աստուած, նաչար ջահիլը լաւ տղայ էր, սաղ, ու ինչի էս հանգի դօխտուրնիրի ձիռը ննգաւ, սաղ։

Դօխտուրնիրը դիփ էլ էտենց ին, մինչչկլի չիս մեռնի, վունչիչ չին իմանայ ու ուփրօ հիւնդին կու չարչրին. կարթացի նաչար տանջուած հիւընդի ու նուր մեռածի ճակտին։

Աստուած ձիզ ամեն փորցանքներեմէն ազատէ, համա, մի սաէք գեթաղւայ, դուք քա՛նի քանի էս թաւուր դօխտուրնիր իք տեհի, հ՜ը, մաշ աշխարքս փայշիւ չէ՞, վուր սաում իմ ու չիք էլ ւստում։

Գասպար Կոլոտօւզեանց

## ՊՐԻԶ (լո՛ւրջ)

«Խաթաբալայի» №35-ում, մի պրիզ էինք առաջարկել, իմանալ Սիրական Տիգրանեանի և Յովհաննէս Սաղաթէլեանի համեմատական խելօքութիւնը։

Մինչև այժմ այդ հարցի մասին ստացել ենք 128 պատասխան. որոնց համառօտ բովանդակութիւնը կտանք մօտիկ ապագայում, բայց քանի որ 128 պատասխանով հեշտ չէ մէկի խելօքութիւնը ափաչկարայ՝ ի լուր աշխարհի յայտարարել—ի գիտս միւսի՝

Ուստի ժիւրիս խնդրում է հետաքրքիր և խելքաքան ու հոգեբան հայերին, անաչառ և այդ հարցի մասին մեզ տեղեկութիւն տալ, թէ՝ երկուսից որին աւելի խելօք են համարում և որին աւելի նուազ խելքի տէր։

Մի խիստ անվնաս և անշառ բան, որից ոչ ոք վախենլու կարիք չունէ.

Խոստացած պրիզը՝ 10 րուբլու գրքեր կարող է ստանալ նա, ով աւելի յարմարաւոր և ըստ հարկին վճռէ սոյն հանելուկը։

Խմբագրատան ժիւրիի մէջ մասնակցութիւն ունին մեր յայտնի հրապարակախօսներից շատերը, այլև բժիշկներ, իրաւաբաններ ուսուցիչներ, հասարակական գործիչներ և գրողներ,—ինարկէ նրանք՝ որոնք դեռ եւս չեն բռնուած՝ և ազատ են։

## ՓՈՔՐԻԿ ՖԵԼԻԵՏՕՆ

### ԸՆՏԱՆԵԿԵԱՆ ՀՈՎԻԵՐԳՈՒԹԻՒՆ

(Թարգմ. ռուսերէնից)

I

—...Դէհ, ինչ ես, հոգեակ, ջղերդ քայքայում։ Չէ որ բժիշկը արգելեց...

—Խորտակուիր դու քո անիծեալ ջղերով-ջղերը. հոգիդ, սիրտդ, արիւնդ կը փչացնես, ոչ թէ միայն ջղերդ։ Լաւ է քեզ—թեթեւօլիկ անփոյթիդ։ Իսկ ես նրա մա՜յրն եմ։ Ո՞վ պիտի նրա մասին մտածի, եթէ ո՛չ մայրը։ Նա խօ մի դար չպէ՞տք է կոյս մնայ։

—Հոգիս, իհարկէ ճշմարիտ է, բայց չէ՞ որ հիմայ վաղ է ամուսնանալ, ցուրտ է։

—Ի՞նչ կայ, ինչ ցուրտ. լաւ պանսիոնատ կը վարձենք, որտեղ երիտասարդներ էլ շատ կը լինին։ Դուցէ այս անգամ կա-

րող է յաջող լինել։ Ի՞նչ է, ամենայն տարի ճանապարհւում ենք, վերջին կոպէկները ծախսում և... ոչինչ. շարունակ յիմար ենք մնում։ Ա՛յ անցեալ տարի Կոմարովները շուտ գնացին և ինժիններ որսացին։ Գուցէ այս անգամ Աստուած և մեզ կուղարկի մի անասնաբոյժ, կամ մի սպայ։

—Հոգեակ, մի՞թէ ես իմ աղջկայ հայրը չեմ. բայց չէ՞ որ դեռ շուտ է։

—Դու շատ ես հասկանում... առհասարակ բոլոր տղամարդիկ յիմարների թագաւորներ են։ Էհ, ինչ եմ քեզ պէս մի խենթի հետ երկարացնում։ Վաղը անպատճառ ճանապարհւում ենք, լսում ես։

II

—...Ահա այս կողմի սենեակները շատ յարմար են, տիկին. խաղաղութիւն, հանգստութիւն է։ Շարքով, ահա այստեղ պաշտօնաթող գեներալ է աղջկայ հետ. դիմացը երկու օրիորդներ-վարժուհիներ...

—Հըմ... այո, իսկ ո՞վ է ահա այստեղ №№ 14...15...

—Ձեզ ճշմարիտն ասեմ, այստեղ մի քիչ անհանգիստ է. ձայն ու աղմուկ։ Տասներորդ №-ը մի պաշտօնեայ է ապրում, կարծեօք ինտենդանտ է, իսկ ահա № 15-ում երեք ուսանողներ են բոլորը, գիտէք՝—երիտասարդներ... ընկերները հաւաքւում են և ձայն ու աղմուկ է բարձրանում մի քիչ։

—Այո, այո, ի հարկէ... ասացէք, իսկ № 30-ը դատարկ է՞։

—Ես ինքս եմ ձեզ նախազգուշացնում, ընկերներ, աղմուկ...

—Էհ, ինչ անենք։

—Ինչպէս կուզէք. բայց ես պարտաւոր էի նախազգուշացնել։

—Ի հարկէ, ի հարկէ... այդպէս ուրեմն. հաշւեցէք երեսուներորդը մեր հաշւին։

III

—...Սօնիչկա, գնանք ակմբանոց զբօսնելու։

—Մայրիկ, կարծես ինձ ցանկալի չէ. ձանձրացրեց ինձ այդ քաղաքը, հագնելու անգամ ծուլանում եմ։ Աւելի լաւ է գնանք բաղը։

—Իսկ ես քեզ ասում եմ գնանք ակմբանոց. անմի՛տ։

—Ես յոգնել եմ, մայրի՛կ։

—Սատանան քեզ չի հասկանում։

—Մայրի՛կ...

—Ինչ ես սովորեցնում ինձ, յիմար աղջիկ։ Դու ոչինչ չես հասկանում. այժմ բոլորը ակմբանոցում են զբօսնում. գուցէ կարծում ես, թէ փեսացուները տնե՞րն են վազելու քեզ մօտ։ Գեղեցկուհի՞ է գտնւել, կը սպասեն մի քիչ...

—Մայրիկ, բայց ես չեմ կարող ամբողջ օրը քաշ գալ

—Իսկ դու կարծում ես, ինձ հաճո՞ է ամենայն տարի քեզ պանսիօններների մօտ տանել, բաւական է, կարելի է ասել վերջին կոպէկները...

—Ա՜խ... դէհ, գնանք։

IV

—Քանի անգամ ես քեզ ասել եմ, շարունակ կանգնիր երկրորդ կարգի պլատֆօրմի վրայ, երրորդի շարքում։ Բացի կօնդուկտորից, ո՞վ է իմանալու, որ քեզ մօտ երրորդ կարգի տոմսակ է։

—Բայց կօնդուկտորը արգելում է։

—Շարունակ հօ նա չի՞ կանգնելու քեզ մօտ։

—Բայց յարմար չէ, մայրիկ, երբ նա խնդրում է անցնել երրորդ կարգի վագոնը։

—Իսկ մեզ յարմար է՞ ամենայն տարի տանել քեզ ամառանոց. անգութ։

—Ա՜խ, ինչ ես սղոցում ինձ։ Մի բոպէ անգամ հանգիստ չէ տալիս։

—Այո, ի հարկէ։ Քո կարծիքով երեկ քեզ լաւ պահեցիր պարերում։

—Մայրիկ, բայց ես չկարողացայ հանգստութեամբ լսել նրա երկդիմի խօսքերի իմաստը։

—Իսկ ինչ, ականջներդ կը թափւէ՞ր. նա դէպի քեզ հանաքով մի բան է ասում, իսկ դու նրան «կծո՞ւմ»... Ինչպիսի ինստիտուտուհի՞ է գտնւել։

—Մայրի՛կ։

—Ինչ մայրի՛կ, ինքս գիտեմ ինչ է, «մայրի՛կ», այ, նոյնիսկ յիմար ուսանողին քեզ մօտ պահել չկարողացար։

—Բայց չէ որ նա այնպէս յիմար և...

—Դա ինձ դուրեկան է. յիմա՛ր... իսկ դու ինչ ես, խելօքուհի՞։ Ահա կը տեսնես ինչպիսի խելօքութեամբ կը գաս տուն։ Շուտով ամառը վերջանում է. իսկ դու շարունակ... ա՜խ, յիմա՛ր, դու յիմա՛ր...

V

—...Իսկ ես քեզ չասացի՞, հոգեակ. հարկաւոր չէ շուտ ամառանոց գնալ, միևնոյն է որ ոչինչ չի...

—Այո, ոչի՞նչ. դէհ համբուրիր խելօք աղջկադ հետ, այդպիսի գլխի հետ դժւար է մինչև գերեզմանը ապրել։

—Դէհ, սաս, ինչո՞վ եմ ես մեղաւոր, ինչով։

—Հարկաւոր էր լսել ինձ, ես քեզ ասել եմ, ուշքդ դարձրու ուսանողի վրայ, իսկ դու... էհ, ինչ ասել, մի՞թէ դու մեղք ես գալիս ծերերին։

Մայրի՛կ։

—Թո՛ղ, յիմար. լաւ է հաւաքիր իրերը ճամպրուկի մէջ. արդէն բոլոր շրջակայ հարևանները ճանապարհւել են քաղաք, ժամը յարմար և լաւ չէ։

—Իսկ քեզ չասացի՞, որ ոչ մի հիմք չունի շուտ ամառանոց գնալը։

—Ասացի՛ր, ասացիր, դէհ լաւ, յաջորդ տարին կը լսեմ քեզ յիմարիդ և ուշ կը գնանք. տեսնենք դորանից ինչ դուրս կը գայ։ Դէհ հաւաքւիր կայարանը գնալու։

Գ. Սափեան

## ՇՈՒՏԱՍԵԼԻՔ

Բիձա, կօսէ, դէղէն սաաց, կօսէ, միս առնի, կօսէ, դրկէ, կօսէ, տանից չառնիլ՝ չանէ, կօսէ։

## ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ՆԻԱԳՆԵՐ

Կենսայօյզի նաւաբեկւած ափերին,
Երբ խորանիս վսեմ վէմերն աղարտած,
Եւ թափառիկ, հոգիս տւած հողմերին,
Ճրջում էի անհիւրընկալ, անարգւած.
Կայծի նման, որ չոր դէղն է բանկում,
Դու փայլեցիր իմ տաճարին անտրտում։

Յուշքիններս թշնամական նետերով,
Հատու՝ ինչպէս սև կայծեր անմոռաց,
Խոցոտեցին իմ հէզ հոգին անխռով
Եւ յուզմունքս հեղեղ բերեց արտասուաց.
Գարնան ցօղ չէր կենսաբեղուն փթթումի.
Սոսկ մի խենդուկ տեղատարափ յուզումի..

Սէր չխօսեց իմ հոգու մէջ անմեկին,
Այլ վերյուշի և տանջանքի հեծծիւններ.—
Եւ ես երբեմն ախտել էի սիրաղին,
Հնչել էի նիրհական նւագներ,
Բայց իմ սիրտս եղէգնի պէս անկոյւծ
Սէրս էր թաղել ցուրտ շիրմի մէջ անգարուն...

Իսկ դու, աղջիկ, ինչ ես ուզում, որ քեզ տամ.
Ես չեմ ուզում, չեմ կարող և քեզ խաբել—
Սիրականն՝ իմ անցած սիրոյ յարաժամ
Թոյն կը քամի նոր սիրոյս մէջ անարգել։
Գնա հեռու գերեզմանի փոշիից
Ծաղիկ կեանքդ թող միշտ բուրէ անկոկիծ...

Եր.

## ՆԱՄԱԿ ԱՇՏԱՐԱԿԻՑ

Քաւոր գասպար.

Էն նամակը, որ գրել չի՞ թէ, մեր գեղըմը փօղարարձու ջոգեցին, ժողովին էլ կոխւ էլաւ. բա չես ասիլ, էտ թաղա ջոգածներին հաստատել չեն, հներին են հաստատել։ Հմի կասես, խի՞ չեն հաստատել։

Հէրու մայիսին, որ ըլնես փօղարարձու չի ջոգեցի՞ն, տխար ըտոնց համար կանգիդատ էլ ին ջոգել։ Փօղարարձուները որ մինը-մէկ էլաւ, էտ կանդիդատները պակասածների տեղերը բռնեցին. ընենց որ բովը դըւեց։ Դու մի ասիլ, էտ բանիցը գործակալը բէխաբար ա ըլէ։ Մի օր վեր ա ունում ու գըրմ կոնսիստորը, թէ Աշտարակ փօղարարձու չկայ։ Ընդիան էլ գըրմ են, թէ դէ որ ըտենց ա, գնա թաղէքը ջոգիլ տուր. նա էլ վե կացաւ յուլիսի 13-ին էկաւ մեր գեղը փօղարարձու ջոգեցինք։

Որ թաղէքը ջոգեցինք ո՞չ, էլա գործակալը յիրա պրատակօլը գրկած չի ըլըմ, հին փօղարարձուները դակլատ են տալի, թէ մենք մեր դուլլուղիցը դուս չենք գալի, համ էլ մեր բովը դուզ ա։

Կոնսիստորը թաղէքանցը տակազ ա անըմ, հներին ա հաստատըմ։ Էլա ընենց ձէն ու ձուն կայ, որ վայթէ գործակալութենը ձեռիցը խլեն։

Այ քաւոր ջան, տխար մեր գեղըցիք ուզըմ են իմ ու քու բարեկամութենը քանդեն, բա ըտու ճարը ո՞նց պտի ըլնի։ Կպչըմ են եախէս, թէ էտ ինչ ա, վրէդ հախ ես արել, գեղըմը ինչ ըլնըմ ա, վէր ես ունում գրում «Խաթաբալին», մեզ խայտառակ անըմ, ինչ ա թէ Գասպար Կալատոզովը քու

քաւորն ա. ընել ինչ ես գրըմ, Աստօծ յետ ու հեռու տանի։

Այ քաւոր ջան, բա ինչ չի գրեմ, ախար իմ նամուսն էլ չի վէրնըմ է, որ մեր գեղը ուրիշ տեղերից յետ ընկնի։ Ֆօսքի խաթեր, որ Վանքն ու Ճեմարանը յիրանց թախըմով վեր ունենք, նրանց գեղը մերիցը ընչիվ ա էւել, եա թէ չէ մեր ռհմթն ա հարուստ, թէ նրանցը, որ նրանք յամէն բան էլ ունեն, գրադարան, ընթերցարան, ապտերք գրքի դուքան. էլ ինչ ասեմ, ամէն բանով էլ մեզնից առաջ են։

Լաւ, հլա ծխական շկօլի գիւղին շուռ չի տւին Սումբաթ Շհազգօվի անըմով, էտ ընդու համար էր, որ Սումբաթի եթըմները շկօլին փող չի տւին ու մինիսկի պրիգաւորը ձեռաց ընենց գրած, որ գրել են թէ, Սումբաթի յիշատակին, շկօլի գիւղին շուռ ենք տալի, նրա անումովը շինըմ ենք Սումբաթով շկօլ։

Բա խեղճ Պերճի գրադարան—ընթերցարանը խի չէր բաց անըմ. նա հօ լաւութենից սաւայի, վատութեն չի արել։ Բա հենց դուք անդը խոստացաք, որ նրա յիշատակին գրադարան բաց անէք։ Ֆօսքը ախըր չի, խօսքը կատարիլն ա։ Փառք Աստու, համ ռհաթիցը փող թափ էլաւ, համ էլ բանկիցը տւին։ Դժարը փողն ա, փողը կայ։ բաս էլ խի չէք բաց անըմ։ Բա ամօթ չի մեր գեղի համար, որ ըղտար յետ ա էթըմ, էլ առաջուայ պէս լոպպաղ, լոպպաղ կարըմ չենք խօսալ, մեր գեղին գովալ։

Առաջ որ հարցնըմ են, թէ ձրղիանցի էք, հպարտ, հպարտ ասըմ ինք «աշտարակցի», Պերճի, Ներսէսի, Սմբաթի գեղըցի ենք։ Հմի որ հարցնող ա ըլնըմ, թէ ձրղիանցի էք, սրը կամանց ասըմ ա աշտարակցի. որն էլ թամուզ տակաղ ա ըլնըմ, ասըմ ա թափադըլլակցի—եա թաթղրանցի եմ։

Քո սանահէր Յարութ

---

## ԳԻՇԵՐԵՐԳ

Գեղեցկասփիռ աստղերն եղան
Պարուրւեցին երերին.
Լուսանշոյլ շարան-շարան
Փէշփիլացին գիշերին։

Լուսինն անձուկ ճամբու ընկաւ
Դալուկ-դալուկ մենանցիկ.
Ամպի տակին մարեց-հանգաւ,
Նորէն փայլեց գեղեցիկ։

Փայլի դիւթից ես զարթնեցի
Իղձ-երազից տենչանո.
Սրտիս լարին յուժ զարկեցի,
Ցուշ ձայնեցի գիշերերգ։

Ես երգեցի ցոլը թռիչ
Վճիտ ժպիտն աստղերի
Ես երգեցի լոյսն թռիչ
Ու փազն ազատ ամպերի։

Աստղ ու լուսին, ամպ ու երկին
Միահամուռ ուշ դրին
Եւ իմ ձայնին եւ իմ երգին,
Եւ իմ սրտի լարերին...

Էրնէկ, երբե՜ք լռէին
Իմ մեղեդիս անուշակ,
Էրնէկ իմ մէջ մի՜շտ հնչէին
Ոգի-հոգի ներդաշնակ։

Շաւիղ

---

## ԽՈՒՐԴԱ-ՄՈՒՐԴԱ ԲԱՆԵՐ

Գասպար ջան.

Էս քանի օրս մի գիրք կարդացի, որ ասում ա, թէ խանի բոլոր անդամները կարելի ա փոխել և նրա տեղը թաղէն դնել։ Ղորթ ա, ես էս բանին չէի հաւատում, ամմա — բայց բանից էրեւում ա, որ շատ դրուստ ա ասում։ Օրինակի համար, մեր ուպրաւի գլաւնիքը։ Քանի էս մարդիքը չեն ընտրըւած, շատ նաղուք, առողջ ու խելօք գլուխներ են ունենում, ամմա-բայց որ գլասնի են ընտրւում, ըդրանց գլուխները էնդդար հաստանում ու պնդանում են, որ քաղաքի հասարակութեան հէչ մի բողոքն ու աղաչանքը քեար չի անում։ Էս բանից ես հաւատում եմ, որ ընտրւելուց եդը, դրանք իրանց գլուխները փոխում են ու էրկաթից պինդ քեալլէք են դակադ տալի։

Ու որ հիմի էդպէս ա, Աստուած սիրես արի դու իմ էս դակադները տեղ հասցրու,

---

# ՖԵԼԻԷՏՕՆ

## ՆԵՒՐԱՍՏԵՆԻԿԻ ՅՈՒՇԱՏԵՏՐԸ

Կէս գիշեր էր։ Կինս գնացել էր ննջարան քնելու. իսկ ես դեռ պարապում էի առանձնասենեակումս։ Կատարեալ լռութիւն էր տիրում չորս բոլորս, ոչ մի ձայն, ոչ մի ծպտուն։ Յոգնել էի։ Մի կողմ դրած ձեռքիս աշխատանքը, գլուխս առել էի ձեռքերիս մէջ, մտածում էի ու լսում սրտիս զարկերը։ Մի ինչ որ ջերմութիւն այրում էր մարմինս. կուզէի այդ րոպէին սառն ջրում լինել, գետում լողալ անվերջ։ Չգիտեմ ինչու, սրտիս զարկերը քանի գնում էին արագանում և շնչատութիւնս յաճախացնում էին։

Ողնաշարիս մէջ ցաւ զգալով ես վեր կացայ աթոռից։ Վեր կենալու միջոցին աչքերս մթնեցին և ես իմ առաջ տեսայ փոքրիկ կայծեր, որոնք լուսատու միջատների պէս քայլում էին, շարժւում յետ ու առաջ, իրար հետ միանում և իրարուց բաժանւում։ Ես շփեցի աչքերս ու ճակատս՝ ուշքս վրաս հաւաքելու դիտաւորութեամբ։ Յանկարծ լսում եմ ինչ որ ուժեղ աղմուկ. դուռս են ծեծում։ Քամի՞ է թէ մարդ, ես չգիտեմ, որովհետև ականջներս վշշում էին։ Մարմինիս վրայ որդեր էին շրջում՝ անհաճոյ զգացմունք ծնեցնելով իմ մէջ։ Դուռս շարունակում էին ծեծել։ Ո՞վ պիտի լինէր այս տարաժամ պահին։ Մի յափշտակի՞չ, որ թալանելու էր գալիս, մի թափառաշրջի՞կ, որ քնելու տեղ չունի և պատսպարան է փնտրում։ Բաղխումը ուժեղանում էր վայրկեան առ վայրկեան։ Ո՞վ է, Տէր Աստուած, ինչ են ուզում, ինչու չեն հանգիստ տալիս։

Ճրագիս լոյսը նւազում էր։ Ես ուզեցի իմանալ պատճառը։ Նաւթը հատել էր։ Սենեակիս անկիւնների կահ-կարասիքները ծածկւեցին մթութեամբ։ Դուռը շարունակում էին բաղխել։

Ես լսեցի մի ուժգին հարւած և դռան կողպէքի փշրւելու ձայնը։ Յափշտակիչներ են,—մտածեցի ես։ Ո՞ւր փախչել։ Որդերը, աւելի մեծ քանակութեամբ, շրջում էին մարմնիս վրայ, ականջներս վշշում էին, աչքերիս առաջ կայծերը ցատկոտում և ողնաշարս մեղմիւ ցաւում էր։ Մի արարած, դրսի դուռը փշրելուց յետոյ, աղմկարար քայլւածքով մօտենում էր առանձնասենեակիս։ Դուռը կողպած չէր. նա ճռռաց և բացւեց։ Դռան շէմքին նկարւեց կանացի մի պատկեր։ Ես մի փոքր ազատ շունչ առայ։ Ինչ էլ որ լինեմ, այնուամենայնիւ կնոջից թոյլ չեմ ֆիզիքապէս։ Անկոչ այցելուիս դիմագծերը դեռ չէի նկատում։ Չնայած որ հետաքրքրւում էի իմանալ, թէ ով է հիւրս, բայց ես չմօտեցայ նրան։

Նա կանգնել էր շէմքին քարացածի պէս, և դիտում էր ինձ. Արձանացածը հետզհետէ շարժւել սկսեց։ Թուքս չորացաւ բերանումս։ Ի՞նչ պիտի նշանակի այս բոլորը։ Նա կանգնած էր իմ առաջ, շատ մօտ, աչքերը նայում էին ուղիղ աչքերիս մէջ։ Ի՞նչ աչքեր, վառւած քուրաներ են ասես, որոնց ջերմութիւնը տապակում էր մարմինս։ Մի տաք քրտինք ողողեց մարմինս անախորժ հեղուկի մէջ։ Բայց ես սրան գիտեմ,—յանկարծ միտքս լուսաւորւեց, յիշողութիւնս տեղը եկաւ։ Սա իմ ծանօթ օրիորդներից մէկն է։ Ի՞նչպէս է անունը։ Ամա, օրիորդ Զարուհին է։ Մի լաւ, մի շատ լաւ աղջիկ։ Բայց չեմ հասկանում, թէ ինչու նա կոտրեց դուռը, ինչու այդպէս կոպիտ վարւեց իւր ծանօթի հետ, որին շատ լաւ գիտէ և բարեկամ էլ է հետը։

Օրիորդը աւելի եւս մօտեցաւ ինձ և բռնեց ամուր կերպով ձեռքիս դաստակից ու սեղմեց։ Յետոյ խորհրդաւոր շշնջիւնով ասաց.

—Օրիորդ Նինան թունաւորեց իրան։

—Ո՞վ,—դուրս թռաւ բերանիցս։

—Նա, որին սիրում էիք, որին խօսք էիք տւել ամուսնանալու հետը։

—Ե՞րբ, այսինքն ինչպէս,—պատասխանեցի ու շփոթւեցի։

—Այ, թէ ինչ,—զայրացաւ օրիորդը,—դուք ձեւանում էք որպէս անտեղեակ։ Բայց

ամեն բան փոխեն ու տես, թէ աշխարքը գիտի ինչ ա կարգի ընկնում։

Նախ և առաջ հարկաւոր ա, մեր գիտ հայերի քթերը փոխել. չունքի էս հայկական քթերը, Եւրոպական աչքերին դիր չի գալի, ու ինչդար կտրում են ու աղխաթ են տալի, ոչ ոքի սիրտը չի ցաւում. պատճառ հայոց մեծ մեծ ու կեռ քթերը. Ըսըրա տեղ ես կարծում եմ հարկաւոր ա դնել գերմանական, եա մալաառուների քթեր։

Եղավ, Գասպար ջան, նաղդումը հալա իմ էս ջէբը փոխենք ու նրա տեղը դնենք Մանթաշովի ջէբը իրան պորտմանովը, գորբա բան կլի. քու բանն էլ առաջ կէթա հա։

Դրանից եդը հարկաւոր ա բեմօնտ անել մեր գեղական վարժապետների ու վարժուհիների գլուխները։ Հախ ա, դրանք ամանք խելը վարժապետի սիփաթ ունին իրենց մարմնի վրայ, ամմա էրկու իշի գարին իրարից կարում չեն չոկել. դրա համար հարկաւոր ա դակաղ տալ Սեդրակ Մանդինովի և Ղազարոս Աղայեանի գլխներից մի քանի հարիր հատ, որ դրանք համ իրանց շկօլէքի համար առանձին առանձին դասագրքեր կազմեն, համ էլ խելքը գլխին վարժապետութիւն անեն։

Հարկաւոր ա «Հովւի» խմբագրի գլուխը դնել «Հորիզոնի» խմբագրի ուսերին, «Հորիզոնինը» «Հովւի», չունքի սրանք փոխա են ընկած, ու էրկուսն էլ իրանց տեղումը չեն։

Մեր պարոն Ուհաննէս Սաղաթէլովի գլուխը որ բոկի չի բանում ու էս մարդը Գասուդարստուէննի Դումայումը չատ ուզում ա մի ճառ ասի, ամմա բինադան չկայ, զոռով հօ բան չի՞ լինի. իմ հաչւից Րօդիչեւի գլխից մի հատ դակաղ տուր պաժալուստա։

Համփարցում Առաքելովի գլուխը... ամմա էս մարդու քեալլէն չատ սաֆն ա, ինց որ էրկաթը, հալա մի 30 տարի էլ կը դիմանայ, պաչինկա չի ուզի. թող Յնայ տեղը։

Հայոց Կուլտուրական միութեան պարոն Թատխովին սաս, հէր օրհնած, էլ ճւր ես ընկել դէս ու դէն. գնա Ֆրանդստան, մէ իրեք միլիօն ու կէս թազա գլուխներ դակաղ տուր, մեր էս հաստագլուխ հայոց ազգի համար, ու գիտ էլ մի անգամից կուլտուրական կը դառնան, թէ չէ ուրիշ հէչ մի հնար չկայ։

Մեր հայոց թազա դալամ բռնողներից չատերը հալա մի գիրք չտւած, ուզում են Լև Տօլստօյին հէչ անեն. միան օլում—Անդրէյովի, Մաքսիմ Գօրկու, Ադա Նեգրու, Բեռնսօնի և այլ մի քանի զագրանիչնի գլուխներից դակաղ տուր դրանց, թէ չէ էս եալանչի փահլեւանները մեզ բիաբուռ կանեն։

Ես էնպէս գիդամ, որ իմ գլուխն էլ բեմօնտ անելու կարիք կայ. դրկի գայ մի հատ առուղենար կակարթաւոր սիրուն գլուխ, չունքի ուզում եմ էս ձմեռ մի լաւ սիճիկ աննեմ, խիստ չաղ պրիդանով, լաւ կլնի չէ՞. չուտ դրկի գայ։

Փալանդուզ Մկո

---

## ԱՐԴ... ՔԱՂԱՔԻ ՀԱՅ-ԿԱԹՈԼԻԿ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ

Սիրելի ժողովուրդ.

Էնենց մի քարոզ տի ասիմ օրէ, մի քարոզ տի ասիմ օրէ, ասիք թէ էս վարդապետը խեֆցի՛լ մի է. էն Բաղամու էշը կար օրէ գնաց, գնաց, առխուսը մտաւ, հիմի էս գոլուկը չի էրթլի, աման կոցնելիս է, հա բրէ գոլուկ, չօ բրէ գոլուկ, հիչ գոլուկը էրթլիս մի՞ օրէ։ Օրէ աման չատ կոցնելիս է, ասելիս է.

—«Այ սխպէր, ինչի ես կոցնելի, չե՞ս տեսնելի օրէ, իշտէ հրեշտակը կանգնած է, իշտէ չէ թողնելի։»

Հիմի սիրելի ժողովուրդ, հին կատակարանեմէն անցնինք նոր կատակարանը. էն ջըրհեղեղն օրէ էլաւ, Աստուած օրէ էնքան երեխերք կտրեց, ինչի՞ տի կտրիր, հարցնելիս եմ, ինչի՞ տի կտրիր. համա չէ, սիրելի ժողովուրդ, մի խօսք կայ՝ օրէ կօսէ. «պապը շլոր կերաւ կօսէ, թոռան ակռէքը կտրեց կօսէ»։ Օրհնեալ եղիջիք և օրհնեալ եղիցիք ամէն։

Bis

---

Անտառապահին

—Երևի ձեր անտառում, այսպիսի հրաշալի գիշերները, շատ բազդաւոր զոյգեր են զբօսնում։

—Այո. սակայն նրանցից շատերն էլ—շատ անբաղդ հետևանքների են հասնում։

---

չէ՞ որ ես բոլորը գիտեմ, չէ՞ որ Նինան իմ ամենամտերիմ ընկերուհին է, չէ՞ որ նրա յիշատակարանը այժմ իմ ձեռքին է և ես գիտեմ, թէ ի՞նչ խաղեր էք խաղացել նրա գլխին, ի՞նչպէս խաբել էք նրան և ամուսնացել Լուսիկի հետ։

Նա խօսում էր արագ արագ։ Նրա շարժումները կտրուկ էին և վճռական, աչքերը քուրաների պէս վառ։

—Ես... ես նրա հետ վատ չեմ վարուել երբէք, այդ գիտէ Աստուած,—կակազելով յարեցի ես։

—Նրան թունաւորեցիք և դեռ ասում էք «նրա հետ վատ չեմ վարուել երբէ՞ք»։

—Ես նրան սիրում էի, օրիորդ, այժմ էլ սիրում եմ։

—Բայց ինչու նրա հետ չամուսնացաք։

—Որովհետև սիրում էի նրան։

Մի սուր, կտրուկ ծիծաղ ականջս ծակեց։ Այցելու օրիորդը աւելի մօտեցաւ ինձ և ականջներիս մէջ սկսեց փսփսալ.

—Դուք խելագա՞ր էք, պ. Երամեան։

—Ո՛չ։

—Դուք սատանա էք, պ. Երամեան։

—Ո՛չ։

—Դուք մի փոքր հոգեպէս հիւանդ էք։

—Այո՛։

—Սիրե՞լ էիք և այդ պատճառով չամուսնացա՞ք։

—Աստուած գիտէ, որ այդպէս է։

—Իսկ ձեր կնոջ, Լուսիկին, սիրո՞ւմ էք. ինչու ամուսնացաք նրա հետ։

—Որովհետև նրան չէի սիրում և այժմ էլ չեմ սիրում։ Հակառակ դէպքում չէի ամուսնանայ նրա հետ, ինչպէս որ չամուսնացայ Նինայի հետ,—պատասխանեցի ես զուգզոջիւն ձայնով և սրբեցի ճակատիս քրտինքը, որ կաթկաթում էր աչքերիս մէջ։

—Ես ձեզ չեմ հասկանում։

—Դուք ինձ չէք էլ հասկանայ. Նինան հասկանում էր ինձ, սակայն և թունաւորեց իրեն, որովհետև գիտէր, որ պիտի դժբախտանայ իմ գրկում։ Ես էլ գիտէի այդ, սատի և չամուսնացայ նրա հետ։ Ինչու կործանել մի հոգի, որին պաշտում ես սրբի պէս, որին սիրում ես քեզնից աւելի։ Ես չեմ ապանի մի մրջիւն անգամ, ճւր մնաց թէ մի բանական արարածի, մի անմեղ հոգու։

—Բայց դուք նրան սպանեցիք։

—Ամենեւին։ Նա թունաւորուեց, որովհետև սիրում էր և նրա սէրը Յնաց անաղարտ, նա չքամեց հիասթափութեան բաժակը, սատի և մեռաւ յոյսերով լիքը։

—Դուք խելագա՞ր էք, պ. Երամեան։

—Ո՛չ։

—Դուք սատանա էք, պ. Երամեան։

—Ո՛չ։

—Դուք հոգեպէս հիւանդ էք, պ. Երամեան։

—Այո՛։

—Դուք մարդասպան էք, լսո՞ւմ էք, դուք սպանեցիք Նինային, ես չեմ ուզում լսել ձեր սոփեստութիւնները և թոյլ չեմ տայ, որ դուք «ոչ» ասէք։

Օրիորդը ձեռքը արագ կերպով մօտեցրեց ինձ, դրեց բերանիս վրայ և սեղմեց որքան ույժ ունէր։ Շնչասութիւնս կտրուեց, ես վայր պիտի ընկնէի շնչասպառ, բայց յանկարծ նա ձեռքը վերցրեց ինձանից, նայեց աչքերիս, թքեց երեսիս և մի ապտակ ուեց։ Ես զայրացած զոռացի նրա վրայ, բռնեցի նրա մազերից, քաշեցի ուժգին, կոկորդը սեղմել սկսեցի, ուզում էի սպանել նրան։ Նա ճչում էր աղիողորմ կերպով, նա լալիս էր և թողութիւն աղերսում... Կինս, որ քնած էր միւս սենեակում,—աղմուկ լսելով, եկաւ առանձնասենեակս։

—Ի՞նչ է պատահել, ինչու ես լալիս, ինչու ես մազերդ պոկում, ինչու ես քեզ ծեծում,—հարցրեց Լուսիկը զարմացած։

—Օրիորդը փախաւ, ես նրան ծեծեցի, Զարուհին էր։

—Ի՞նչ օրիորդ, այստեղ ոչ ոք չկայ, դռները փակ են, ժամի չորսը խփեցին, ես զարթուն էի, ոչ ոք չի մտել այստեղ...

Գլուխս դրի սեղանի վրայ և քուն մտայ։ Երբ աչքս բաց արի, տեսայ կնոջս չոքած Մարիամ Աստուածածնի պատկերի առաջ և աղօթելիս։ Նա մոմեր էր վառել և աղօթում էր։ Նա ինձ համարում էր ցնորւած։

Նրամեան

## «ԽԱԹԱԲԱԼԱՅԻ» ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ

(Մտնում է գաւառից եկած մի պարոն.)

*Դէպքը կրկնւում է ամեն օր.*

—Պ. խմբագիրն այստե՞ղ է։

—Այո, ինչ էք հրամայում։

—Ոչինչ, ես գաւառիցն եմ եկել, պարտքըս համարեցի անմիջապէս գալ և տեսնել պ. խմբագրին, յայտնել նրան իմ անկեղծ ցանկութիւններս, ուրախութիւնս ու յարգանքներս, որովհետև գաւառում այդքան թերթը շատ սիրով ու անձկութեամբ կարդում ու սպասում ենք սիրելի «Խաթաբալան», մենք ուղղակի հիացած ենք։ Պ. Գասպար Կալանթարեանին կարծեմ եմ տեսնել։ Ա՛խ ինչ լաւ է գրում նա։ «Մշակին» մօտ էլ պիտի գնամ. ես անկեղծ սիրում եմ «Մշակի» պ. խմբագրին։ Հաջի Համբարձումն էլ ինչ պատուական գրիչ ունի, տեսցէք խըմբագրեմ, պ. Խաժակն ինչպէս է, այստե՞ղ է, ափսո՜ս Ահարոնեանը—ա՛խ, Ահարոնեանը ինչո՞ւ է մինչև հիմայ անտրէն բռնած։ «Հորիզոնի» խմբագրատունը որտեղ է, ուզում եմ գնալ նրանց էլ տեսնել. ինչ լաւ տղերք են. Կալանթարեանն ինչպէս մաղալու է գրում։ «Խաթաբալան» մենք շատ ենք սիրում. «Հորիզոնն» էլ լաւ է, գիտէ՞ք մենք դրան էլ ենք հաւանում։

Տիգրան Նազարեանը հա՛, հա՛, հա՛… Տիգրան Նազարեանն էլ լաւ մարդ է, եղբայր, կեցցէ.

«Հովւի» խմբագրութիւնը որտեղ է, այնտեղ էլ եմ ուզում գնալ։ «Դիւղատնտեսն» էլ եմ կարդում, հրաշալի թերթ է, ինչ լաւ պատկերներ ունի «Խաթաբալան» խօ անտիկա է. պ. Կալանթարեանը այստե՞ղ է արդեօք. Համբարձում Առաքելեանը ջահե՞լ մարդ է։ Բալանթարը դադարեցի է. Թօփչեանը Բագւի Թօփչիբաշևին ազգական խօ չէ՞։

Եկել եմ Թիֆլիզ գաւառից, ուզում եմ ամեն բան տեսնել—այստեղ խօ լաւ է.

Էջմիածնից ինչ համբաւ, Կաթողիկոսն ինչպէս է, լա՞ւ մարդ է, երեւում է, որ խելօք է, բայց Սուքիասն էլ պակաս չէ, թունդ ազգասէր է։ Ափսոս Օրմանեանը չեկաւ, նա էլ լաւ կաթողիկոս կլինէր։ Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանը որ չմեռնէր՝ նրանից լաւը չէինք ուզի. «Մըշակում» գրած էր։ Հայրիկն էլ լաւ մարդ էր, բոլորովին սուրբ էր. «Սուրհանդակ» թերթն էլ շատ լաւ թերթ է, «Արշալոյս» թերթն ինչ եղաւ, խմբագիրն ինչո՞ւ դադարեց։—Ա՛խ ինչ լաւ է. ես սիրում եմ Խաթաբալա», սիրում եմ «Մշակ», նոյնպէս «Հորիզոն» և «Հովիւ» և «Սուրհանդակ» ախ ինչ լաւ բան է…

(Նոյն բանը կրկնեցէք միւս թերթերի խմբագրատներում և կտանեք մի պատկեր գաւառացիների վերաբերմամբ։)

*Ծիծակ*

*Փաստաբանների շուրջը*

—Ա՛խ, պարոն փաստաբան օգնեցէք խնդրեմ,—վերադարձնեցէք իմ պատիւը։

—Ի՞նչ է պատահել, պարոն։

—Գնացել էի Մարտիրոսեանից հաշիւս ստանալու. բայց նա՝ հաշիւս մաքրելու փոխարէն՝ որոտաց. «ступай къ черту!».

—Ցաւալի…

—Ցաւոտ՝ ինչ կարող էի անել,—ուղիղ դիմեցի ձեզ։

*Լիլ.*

## ՊՈՍՏ-ԱՐԿՂ

*Պետերբուրգ.* Ուսանողին.—Մի՞թէ այժմս միայն հասկացաք այդպիսի դատարկ բաներ, ապա որքան պէտք է ապրէք, որ դուք գիտութիւն ձեռք բերէք։

*Աստրախան.* Գար. Սաղաթեանին.—Մենք ձեզ փնտրում ենք, իսկ դո՞ւք՝ թագնըւում էք. սակայն, լաւ չէ, սպասում ենք նամակի։

*Թիֆլիզ.* Հարցնողներին.—Ուզում էք իմանալ թէ «Խաթաբալայի» №32-ում նկարուած անխիղճ բժիշկը ո՞վ է. ասացէք՝ ո՞վ չէ։ Բայց քանի որ կուզէք անպատճառ իմանալ, ուստի և ազգանունները տւէք այդ տիպի բժիշկների, ով աւելի շատ կը յիշւի, նա է. մենք քաջարկութեան սկզբունքով ենք առաջնորդւում, եկեղեցին էլ է ասում. *Ձայն բազմաց, ձայն Աստուծոյ։*

*Թելաւ.* Ծիծինային.—Գանգատւում էք, որ ձեր գործակալը եկեղեցու գաւթում և գերեզմանատանը կովեր է պահում կթելու համար. կար ժամանակ, որ այդ հայ գործակալները երկոտանի կովեր էին կթում, հիմայ փառք Աստուծոյ չորս ոտանիք է կթում, ինչ կըլինի, բայց որ գերեզմանները չէ յարգում, նշանակում է, ինքն իրեն չէ յարգում, չէ որ վաղ ուշ՝ ինքն էլ պէտք է մեռնի։ Ամէն։

---

*Նորապսակներ*

Ամուսինը.—Նինա-ջան, դու մոռացե՞լ ես, որ մենք այցելութեան ենք գընում։

Կինը.—Ի՞նչ է պատահել որ…

Ամուսինը.—Շատ անպատշաճ է այցելութեան ժամանակ այդքան դէկօլտէ հագնելը։

Կինը.—Բայց դու մոռացե՞լ ես, որ ես քո առաջին կինն եմ։

Ամուսինը.—Ո՞չ։

Կինը.—Դէ, ուրեմն. չէ՞ որ առաջին կինը մեր նախամայր Եւան էր, որ միանգամայն անհագուստ էր. սակայն Ադամը նրան այդ մասին ամենևին նկատողութիւն չէր անում։

—

—Ա՛խ, ինչ հող տամ գլխիս, սիրելի քոյր. ամեն գիշեր երազումս հանգուցեալ ամուսնուս ատելի երեսն եմ տեսնում…

—Երևի, ինքը քեզ չի տեսնում, թէ չէ ամենևին չէր երևալ։

*Լիլ.*

## ՅՕԳՈՒՏ ԱԴԱՆՑԻՆԵՐԻ

Եկատերինեան երկաթագծի Ալմազնայա կայարանից Մ. Մ. Մուրադեանը ուղարկել է մեզ տասը րուբլի, որից 5 ր. Մ. Մուրադեանից և 5 ր. Ա. Մուրադեանից յօգուտ Ադանայի աղէտեալների։


### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ.

«Գուտտենբերգի» հրատարակութիւնները

(ԴԱՍԱԳՐՔԵՐ)

1. Քերականութիւն մայրենի լեզւի, Ա. Բ. և Գ. մաս. Ստ. Պալասանեանի. . . 75 կ.
2. Ընդհան. պատմ, Հին-Դար, Վինոգրադովի, թարգ. Խաժակի. . . . . . . 1 ռ. —
3. Գծագրութեան օրինակներ Գ. Լեոնեանի Ա. մաս . . . . . . . . . 20 կ.
4. Բ. մաս. . . . . . . . . . . 20 կ.
5. Գ. մաս. . . . . . . . . . . 35 կ.
6. Դասագ. ընդհ. աշխարհագր. ա. ընտական մաս, կազմեց Լ. Բարայեան. . . . 60 կ. բ. մաս. Աւստրալիա, Աֆրիկա, Ամերիկա և Ասիա. . . . . . . . 65 կ. գ. մաս. Եւրոպա. . . . . . . . . 50 կ.
7. Начальная книжка для арм. школъ, С. Мандиняна. . . . . . . . 55 к.
8. Մեթոդիկա, Ա. Ռուդէի փոխ. Ց. Տէր-Միրաքեանի. . . . . . . . 1—50 կ.
9. Հայկ. վայելչ. և գեղագր. Գ. Լեոնեանի տետրակ Ա. . . . . . . . 40 կ.
10, » » Բ. 40 կ.
11. » » Գ. 40 կ.
12. Ընդհ. աշխ. դասագ., մաս Ա. թարգ. Ա. Արեգեանի. . . . . . . 60 կ.
13. Սենեօբօս, Համառօտ պատմ. քաղաքակրթութեան. . . . . . . . 1 ռ. —
14. ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐ, Աղայեանի, Փափազեանի, Ահարոնեանի և Թումանեանի. . . . . . . . 2 ռ. —

Գրախանութը գրքերը վերադիր վճարով ուղարկում է նրանց, որոնք ուղարկում են կանխավճար։ Գումարով գնողներին մեծ զեղչ։

Դիմել՝ Тифлисъ, Книжный магазинъ «ГУТТЕНБЕРГЪ» Г. И. Галустяну.

Գրախանութի գրացուցակն ուղարկւում է ՁՐԻ։

---

Լոյս տեսաւ

Ռ. Խան-Ազատ եւ Գ. Վարդանեան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

27 նկարներով և մի մեծ գունաւոր քարտէսով։

Դասընթացքը ծխ. դպրոցների IV բաժանմունքի և ժողովրդական ընթերցանութեան համար։

ԳԻՆՆ Է 75 ԿՈՊ.

Գլխաւոր պահեստը «Գուտտենբերգ» գրավաճառանոցում. կարելի է դիմել և հեղինակներին՝—Тифлисъ. Сурпъ-Нишанское училище.

ԼՈՅՍ Է ՏԵՍԵԼ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ
**ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԷՆ**
Համառամասչյակի
# ԲԱՌԱՐԱՆ
**Русско-Армянскій словарь**
(10,000 բառ, 406 էջ)
Գինն է 75 կոպ.
Դիմել՝ Чавчавадзевская ул., № 25-а, 116 Арутюну Туманяну.




Առաջնակարգ համարներ
# „ՎԻԿՏՈՐԻԱ"
Գտնւում է Թիֆլիզի կենդրոնում, Դւորցովայա փողոցի վրայ, փոխարքայի պալատի այգուն կից:
Համարները գեղեցիկ կերպով կահաւորւած, նորերս հիմնովին վերանորոգած և ամէն յարմարութիւններով: Առաջինը անցնում է ելեկտրաքարշը:
Օրական վարձը 60 կ. մինչև 4 ր.:
Ամսով վարձողներին զիջումն: Ընտանիքներին առանձնապէս տրւում են ամէն տեսակ յարմարութիւններ:
Ծառայողները վստահելի և քաղաքավարի են: Սենեակներին կից կան տաք և սառը վաննաներ: Ելեկտրական լուսաւորութիւն:
Հեռախօս № 1033

Ստ. Լիսիցեանի, Յովհ. Թումանեանի ու Լ. Շանթի
ԿԱԶՄԱԾ
# ԼՈՒՍԱԲԵՐ
Հայերէնի դասագիրք
Լոյս տեսան
Ա. տարի, երրորդ տիպ. 30 կ.
Բ. տարի, երկրորդ տիպ, բարեփոխ. 45 կ.
Երկուսն էլ ընդունւած կովկասեան շրջանի ուսումնարանական հոգաբարձուի կողմից, իբրև դասագիրք պետական դպրոցների համար:
Տպագրւում են.
Գ. տարի . . . . . 60 կոպ.
Դ. տարի . . . . . 75 կոպ.
Գլխաւոր պահեստներն են հետևեալ գրախանութները. Թիֆլիսում «ԳՈՒՏՏԵՄԲԵՐԳ» և Կենտրոնական, Բագւում Сотрудникъ, Երևանում Յովհաննիսեանի և Շուշում Բ. Տէր-Սահակեանի:

Մի ինտելիգենտ հայ ընտանիք
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է
**ԳԻՇԵՐՕԹԻԿ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ**
բոլոր միջնակարգ դպրոցների համար, կարող են և պարապել նրանց հետ:
Հասցէն՝ Реутовская № 29
Բնակարան Բէգնազարեանի

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՒԹԵԱՆ ՄԻՆԻՍՏՐ. ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԳՏՆՒՈՂ
# Տ. Մ. ՓԻԼՈՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
Թիֆլիս, Միքայէլեան պր. №24 4.
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն:
Դասընթացքն աւարտողներին տրւում են ատեստատներ:
ԳՈՐԾՆԱԿԱՆ պարապմունքները կատարւում են կուրսերում Լոնդոնի Pifman. և Փարիզի Pigi-r դպրոցների ձևով կազմակերպւած Must r. Comtoir-ում: Նիւթերն առնւում են կեանքից. Առարկաններն են. ա) պարտադիր. 1) Հաշւապահութիւն (պարզ, իտալ. գերմ. ֆրան., ամերիկական, բանկային և գործարանական. 2) Առևտրական թւաբանութիւն, 3) Քաղաքատնտեսութիւն, 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն), 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Թւաբանութիւն համրիչի վրայ, 7) Վայելչագրութիւն, արագագրութիւն (ամենավատ ձևերի ուղղումն), բ) ոչ պարտադիր. 1) օտար լեզուներ, 2) ոճագրութիւն, 3) դակտիլոգրաֆիա (ռեմինգտոն և այլ.) և 4) առևտր. թղթակցութիւն օտար լեզուներով: Պարապմունքները կատարւում են և դաս դաս: Խնդիրների ընդունելութիւնը 10—12 և 4—5 և կէս. ժ.: Ծրագիրը և կանոնները ուղարկւում և տրւում են ձրիաբար կուրսերի շէնքում:
Խնդիրների ընդունելութիւնը օգոստոսի 20-ից. սեպտեմբերի 15-ից պարապմունքները:
Կուրսերի հիմնադիր՝ առևտր. գիտութեան կանդիդատ՝
Տ. ՓԻԼՈՅԵԱՆ

**Տ. և Ս. ՂՈՒԿԱՍԵԱՆՆԵՐԻ**
# ՁԿՆԱՎԱՃԱՌԻ ՄԱԳԱԶԻՆԸ
(Պուշկինեան փող. տուն Մանդուկեանի վրաց սեմինարիայի դիմաց)
Ամէն օր ստացւում է սեփական ձկնարդիւնաբերանից թարմ ձուկ
ՍԵՒՐՈՒԳԱ, ՕՍԷՏՐԻՆ, ԹԱՌԹ
Ունենք մեծ քանակութեամբ թառթի դօշ, Դոնի և տեղական, բալիկ, ճիպա, ցալձվալա, խանի և այլ
ԸՆՏԻՐ ՏԵՍԱԿԻ ՁԿՆԿԻԹ (жидка) ԵՒ ԽԱՒԻԱՐ
Կովկասեան և արտասահմանեան ձկնային կանսերւներ
Գները ամենաչափաւոր



Ծխախոտի գործարանից՝
**Ն. Ի.**
**ԲՈԶԱՐՋԵԱՆՑ ԵՒ ՈՐԴ.**
Ի վաճառ է հանւած
ՆՈՐ ՊԱՊԻՐՈՍ
«ТОВАРИЩЪ» 20 հատը 5 կոպ. (միջակ ձևի)
«ДРУЖБА» 20 հատը 5 կոպ. (բարակ ձևի)
Դիտողութիւն.
Առևտրական տունը վճռեց ի վաճառ հանել այդ պապիրոսները ամենաէժան էտիկետներով, որպէսզի այդ կերպով հնարաւորութիւն լինի պ. պ. ծխողներին միշտ էլ լաւ յատկութեան և անարժէքի համով ծխախոտ ընձեռել:
Ամեն տեղ էլ կարելի է պահանջել
Մեծ քանակութեամբ առած պատւէրները կը կատարւին ըստ չափու հնարաւորութեան:

Ս. ՍՈՂՈՄՈՆԵԱՆԻ

ԼՈՒՍԱՏՊԱՐԱՆԸ
(Фото-Цинкографія)

ՏԵՂԱՓՈԽՒԵԼ է Պուշկինսկի փողոց, Պուշկինսկի Պասաժ.

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
ՎԱՐԴ. ՍՄԲԱՏԵԱՆՑԻ

Պատրաստւում են երկսեռ աշակերտները բոլոր միջնակարգ (և Ներսիսեան, Յովնաննեան, Գայիանեան) դպրոցներ ընդունելու. Աւանդւում են նաև ֆրանսերէն, գերմաներէն. ձեռագործ (կերտուածք, դաղում և կոզմագործութիւն) և մարմնամարզութիւն։ Ընտանիքիս մէջ միայն ապրելու կայ 2 աշակերտի տեղ։ Ընդունելութիւնը սկսված է։
Սօլօլակ, փող. Պասկևիչի, № 13.

ՇԱՐՈՒՆԱԿՒՈՒՄ է
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Գրական, քաղաքական, հասարակական, եւ առևտրա-արդիւնաբերական անկուսակցական օրաթերթի

Առայժմ լոյս է տեսնում երկուշաբթի օրերը։

Հասցէն՝ Тифлисъ Редакція газеты «Сурандакъ»

МАГАЗИНЪ

Композиція

Тифлисъ Пушкинскій пассажъ № 8.



Громадная экономія шведскаго композиціон. бѣлья.
→Носится не менѣе двухъ лѣтъ←
Постоянный большой выборъ свѣжаго товара
Воротниковъ, манишекъ и манжетъ.
Единственный представитель для Тифлиса и ихъ окрестностей
по фабричнымъ цѣнамъ
передѣлкафвъ любой фассонъ безплатно
М. А. КАЛТАГЯНЦА



ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ
„ՊՐՕՎՕԴՆԻԿ"
ԱՐՏՕՆԻԱԾ
Ամենալաւը Աշխարհում

ԱՆՊԱՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԶՈՅԳԻ ԱՆՕՐԻՆԱԿ ԱՄՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ



Ամենառաջին և ամենաբարձր ամրութեան, լաւ յատկութեան, չքեղ ֆասոնների և ամենալաւ գործածւող նիւթերից



ԱՐՏՕՆԻԱԾ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ԱՄԲՈՂՋ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ

ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ
ՊՐՕՎՕԴՆԻԿ




1888

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Մ Ի Ւ Ն Խ Ե Ւ Վ Է Յ Ս

ԹԻՖԼԻԶՈՒՄ ԵՒ ԲԱԳՒՈՒՄ

## ԱՄԱՌԱՆՈՑԻՑ ՎԵՐԱԴԱՐՁՈՂՆԵՐ



Այս շքեղութեամբ են վերադառնում ամառանոցաբնակները:

## %%-Ի ՀԱՐՑԸ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ



Շւեյցարը հրէաներին.—Թէև, ինչպէս մեծապատիւ դիրեկտորներն էլ են ասում, ձեր երեխաները չափից դուրս ընդունակ ու աշխատասէր են ուսման մէջ, բայց ներեցէք, այստեղ տոկոսի հարց է... հրէայ երեխաներին կարելի է ընդունել որոշ թւով... այո, այդպէս...

Թ Ի Ի Ր Ք Ի Ա




Կ Ր Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ա Ր Ց Ը

Յոյն-Թիւրքական տեմպերամենտը։